ALFA AUDIT
CLARITY IN EVERY DETAIL

«ԱԼՖԱ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
Հեռ. (+374 10) 399 855, (+374 55) 560 550
www.alfaaudit.am , info@alfaaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սարիբեկյան միջազգային բժշկական համալսարան»
արտադրական կոոպերատիվի
ղեկավարությանը

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սարիբեկյան միջազգային բժշկական համալսարան» արտադրական կոոպերատիվի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

1. Մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար քանակի համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի հաշվետվությունում արտացոլված առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մնացորդների ճշտության մեջ և անկարող էինք որոշել՝ արդյոք անհրաժեշտ էր նշված գումարների հետ կապված որևէ ճշգրտում կատարել:

2. Մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար քանակի համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ Ծանոթագրություն 6-ում ներկայացված հիմնական միջոցների 1,768,844 հազար դրամ հաշվեկշռային արժեքով շենքերի և շինությունների տարեսկզբի մնացորդում ներառված կապիտալացված ծախսերի ճշտության վերաբերյալ, և անկարող էինք որոշել՝ արդյոք անհրաժեշտ կլիներ նշված գումարների հետ կապված որևէ ճշգրտում կատարել:

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր բացասական կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերությյան գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերությյան ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է

«Ալֆա Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն Լավրենտի Պողոսյան

Աուդիտոր Արման Չատինյան

«25» հունիսի 2026թ.

Երևան

«ԱԼՖԱ ԱՈՒԴԻՏ»
"АЛЬФА АУДИТ"
"ALFA AUDIT"
00128775

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Սարիբեկյան միջազգային բժշկական համալսարան» Ա/Կ

առ 31-ը դեկտեմբերի 2025թ դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	ԾՆԹ.	31.12.2025 հազ. դրամ	31.12.2024 հազ. դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	2,115,466	1,515,811
Ոչ նյութական ակտիվներ		110	126
Հետաձգված հարկային ակտիվներ	18	2,354	1,434
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		2,117,930	1,517,371
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		12,673	25,698
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	162,773	326,200
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ	8	103,307	150,000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	418,988	616,071
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		697,741	1,117,969
Ընդամենը ակտիվներ		2,815,671	2,635,340
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ	10		
Բաժնային ֆոնդ		*100,000*	*100,000*
Չբաշխված շահույթ		*2,314,924*	*2,133,752*
Ընդամենը սեփական կապիտալ		2,414,924	2,233,752
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ		1,161	1,160
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*1,161*	*1,160*
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	*341,277*	*330,718*
Շահութահարկի գծով պարտավորություն		*58,309*	*69,710*
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*399,586*	*400,428*
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		2,815,671	2,635,340

10-ից 26-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. հունիսի 25-ին:

Նորիկ Սարիբեկյան
Նախագահ

Անի Մարգարյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«Սարիբեկյան միջազգային բժշկական համալսարան» Ա/Կ

2025թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար դրամ		2025	2024
Հասույթ	12	842,377	908,203
Ինքնարժեք	13	(256,354)	(237,652)
Համախառն շահույթ		**586,023**	**670,551**
Այլ եկամուտներ	14	39,521	7,484
Իրացման ծախսեր		(166)	(68)
Վարչական ծախսեր	15	(94,138)	(72,419)
Այլ ծախսեր	16	(223,031)	(12,888)
Գործառնական շահույթ		**308,208**	**592,660**
Ֆինանսական եկամուտներ	17	14,729	15,604
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ/վնաս		1,656	(5,351)
Շահույթ մինչև հարկումը		**324,593**	**602,913**
Շահութահարկի գծով ծախս	18	(78,579)	(110,299)
Տարվա շահույթ հարկումից հետո		**246,014**	**492,614**
Այլ համապարփակ ֆինանասական արդյունք		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**246,014**	**492,614**

10-ից 26-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

«Սարիբեկյան միջազգային բժշկական համալսարան» Ա/Կ

2025թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ

	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2023թ.	100,000	1,641,138	1,741,138
Տարվա շահույթ	-	492,614	492,614
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2024թ.	100,000	2,133,752	2,233,752
Տարվա շահույթ	-	246,014	246,014
Հայտարարված շահաբաժիններ	-	(64,842)	(64,842)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2025թ.	100,000	2,314,924	2,414,924

10-ից 26-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Սարիբեկյան միջազգային բժշկական համալսարան» Ա/Կ

2025թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2025թ.	2024թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	հազ. դրամ	հազ. դրամ
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	791,793	771,588
Վճարումներ մատակարարներին	(402,770)	(359,044)
Վճարումներ աշխատակիցներին	(214,663)	(200,859)
Վճարումներ բյուջե և սոց հիմնադրամ, այդ թվում՝	(179,890)	(187,846)
Այլ մուտքեր	1,124	-
Այլ ելքեր	(23,889)	(15,017)
Զուտ դրամական միջոցներ գործառնական գործունեությունից	(28,295)	8,822
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռք բերում	(208,598)	-
Բանկային ավանդների ներդրում	(250,000)	(200,000)
Բանկային ավանդների մարում	300,000	250,000
Տոկոսների ստացում	11,422	15,604
Զուտ դրամական միջոցներ ներդրումային գործունեությունից	(147,176)	65,604
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Շահաբաժինների վճարում	(18,500)	-
Զուտ դրամական միջոցներ Ֆինանսական գործունեությունից	(18,500)	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	(193,971)	74,426
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	(3,113)	(6,124)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	616,071	547,769
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	418,988	616,071

10-ից 26-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը: